

Հաստատված է

Վավերացնում եմ

ՀԱԱՀ գիտական խորհրդում

ռեկտոր

Ա. Թարվերդյան

„-----„ ----- 2016 թ.

„-----„ ----- 2016 թ.

(արձանագրություն N°)

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
«ԱՐԱԲԿԻՐ -1» ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՀԱՆՐԱԿԱՑԱՐԱՆԻ
ՆԵՐՔԻՆ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅԱՆ**

Կ Ա Ն Ո Ն Ն Ե Ր

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1 «Արաբկիր-1» ուսանողական հանրակացարանը (այսուհետ՝ հանրակացարան) նախատեսված է սովորելու ընթացքում ուսանողների բնակվելու համար:
- 1.2 Ուսանողներին հանրակացարանում տեղ հատկացվում է համալսարանի ռեկտորատի և ուսանողական խորհրդի համտեղ որոշմամբ, ուսանողի դիմումի հիման վրա:
- 1.3 Հանրակացարանում բնակեցումը կատարվում է սույն կանոնների 1.2 կետում նշված պայմանների և գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերի (անձնագիր, օրդեր, դիմում) առկայության դեպքում:
- 1.4 Հանրակացարանում ուսանողների գրանցումը և դուրս գրումը կատարում է պարետը:
- 1.5 Հանրակացարանի անհատական օգտագործման գույքը (անկողինը, մահճակալը և այլն) և ընդհանուր օգտագործման գույքը (սեղանները, աթոռները, վարագույրները, գրապահարանները և այլն) ուսանողին տրվում են իր ստորագրությամբ: Ուսանողը նյութական պատասխանատվություն է կրում հանրակացարանի գույքին իր մեղքով պատճառված վնասի համար և հատուցում այդ վնասը օրենսդրությամբ սահմանված կարգով:
- 1.6 Հանրակացարանում բնակվող ուսանողներին տրվում է իր լուսանկարով անցաթուղթ:

1.7 Կողմնակի անձանց մուտքը հանրակացարան թույլատրվում է ժամը 9:00-ից մինչև 22.00-ը՝ հերթապահի մոտ թողնելով անձ հաստատող փաստաթուղթ: Փաստաթուղթ է թողնում այն ուսանողը, որը հրավիրել է տվյալ անձին: Այցելուների ժամանակին գնալու, ինչպես նաև նրանց կողմից կանոնների պահպանման համար պատասխանատվություն են կրում այն ուսանողները, ովքեր հրավիրել են նշված անձանց:

1.8 Ժողովները, երեկոյթները, միջոցառումները հանրակացարանում կարելի է անցկացնել հանրակացարանի ուսանողական խորհրդի և Ադմինիստրացիայի թույլտվությամբ:

2. ՀԱՆՐԱԿԱՑԱՐԱՆԱԲՆԱԿ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Հանրակացարանում բնակվող ուսանողները իրավունք ունեն.

- ա) օգտվել հանրակացարանի կոմունալ կենցաղային ծառայություններից, կահույքից, սարքավորումներից և կուլտուր-կենցաղային հարմարություններից,
- բ) պահանջել ժամանակին փոխել ոչ պիտանի սարքավորումները, կահույքը, անկողնային պարագաները, ինչպես նաև վերացնել կոմունալ կենցաղային թերությունները,
- գ) ըդունել հյուր, սույն կանոնների 1.7 կետով սահմանված կարգով:
- դ) ընտրել և ընտրվել հանրակացարանի ուսանողական խորհրդի կազմում:

2.2 Հանրակացարանում բնակվող ուսանողները պարտավոր են.

- ա) խստիվ պահպանել հանրակացարանի ներքին կարգապահության կանոնները,
- բ) խնամքով վերաբերվել հանրակացարանի գույքի նկատմամբ,
- գ) սենյակներում, միջանցքներում և հանրակացարանին հարող տարածքում պահպանել սանիտարա-հիգիենիկ և հակահրդեհային անվտանգության կանոնները,
- դ) առանց հանրակացարանի ադմինիստրացիայի համաձայնության չտեղադրել էլեկտրական և այլ սարքեր,
- ե) ժամանակին մուծել էլեկտրաէներգիայի և այլ վարձերը:

Արգելվում է

- ա) ինքնուրույն տեղափոխվել մեկ սենյակից մյուս սենյակ,
- բ) մուտք գործել հանրակացարան ոչ սթափ վիճակում,

- գ) օգտագործել ավտոմոբիլային խմիչքներ,
- դ) ինքնուրույն գույքը տեղափոխել մեկ սենյակից այլ սենյակ,
- ե) ծխելը միջանցքներում և դահլիճներում:

- 2.3** Ուսանողները պարտավոր են մինչև ավարտական քննությունները հանձնելը ադմինիստրացիային փոխանցել իրենց հանձնված գույքը: Դրանք չհանձնելու կամ մասնակի հանձնելու դեպքում կրում են նյութական պատասխանատվություն:
- 2.4** Հանրակացարանաբնակ ուսանողները պարտավոր են մասնակցել տարածքի մաքրման, ինչպես նաև հարակից տարածքի կանաչապատման աշխատանքներին:

3. ՀԱՆՐԱԿԱՑԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒԲԴԸ

- 3.1** Հանրակացարանի ուսանողական խորհուրդը համալսարանի ուսանողական խորհրդի կառուցվածքային ստորաբաժանում է:
- 3.2** Հանրակացարանի ուսանողական խորհուրդը գործում է համալսարանի ուսանողական խորհրդի կանոնադրության հիման վրա:
- 3.3** Հանրակացարանի ուսանողական խորհուրդի պարտականություններն են.
- ա) պաշտպանել հանրակացարանաբնակ ուսանողների շահերն ու իրավունքները,
 - բ) հետևել ներքին կարգապահության կանոնների կատարմանը և պատասխանատու լինել մասնաշենքի սանիտարական վիճակի համար,
 - գ) իրականացնել մշակութային, մարզական, ինտելեկտուալ միջոցառումներ հանրակացարանաբնակ ուսանողների առօրյան, ազատ ժամանցը և հանգիստը կազմակերպելու նպատակով,
 - դ) հանրակացարանի շրջակա տարածքը մաքրելու նպատակով պարբերաբար կազմակերպել շաբաթօրյակներ,
 - ե) կատարած աշխատանքների մասին պարբերաբար հաշվետվություն ներկայացնել համալսարանի ուսանողական խորհրդի նախագահությանը: